ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

«19» 01 2015 № 7.1/09.1/167-15

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ իրավաբան
Գ. Հայրապետյանին

Ի պատասխան 14.01.2015 թ.
թիվ 237-ի 3 գրության

Հարգելի պարոն Հայրապետյան

ՀՀ Նախագահի 2014 թ. դեկտեմբերի 1-ի «ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն ստեղծելու և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը վերակազմակերպելու մասին» ՆՀ-602-Ա հրամանագրով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը վերակազմակերպվել է՝ միանալով ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը: Նույն հրամանագրով՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը վերանվանվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքային փոփոխություններն ընթացքի մեջ են:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի վերաբերյալ տվյալները «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին կտրամադրվեն կառուցվածքային փոփոխությունների գործընթացն ավարտելուց և համապատասխան նշանակումը կատարելուց անմիջապես հետո:

Հարգանքով՝

տեղակալ Ա. Գրիգորյան

Կատարող՝ Գ. Բաղդասարյան
հեռ.՝ 010 31 77 20

Հասցե՝ ՀՀ,ք Երևան, 0054, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8
Հեռ.՝ (+ 37410)317717,ֆաքս՝(+37410)363449
Էլ.փոստ՝ mes@mes.am, կայք՝ www.mes.am